Համարը	N 1903-Ն	*Տեսակը*	Ինկորպորացիա
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 31.01.07./7(531) Հոդ.146	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	21.12.2006
Ստորագրող մարմինը	ՀՀ Վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	16.01.2007
Վավերացնող մարմինը	ՀՀ Նախագահ	*Վավերացման ամսաթիվը*	19.01.2007
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	10.02.2007	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Մայր փաստաթուղթ:ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ ԹԱՆԿԱՐԺ...		
Մայր փաստաթղթին փոփոխող փաստաթղթերը՝		Համապատասխան ինկորպորացիան՝
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ Կ ... (21.06.2008 -)		ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ-Ո ... (21.06.2008 -)

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ՁՏԱՐԿՄԱՆ, ԲԱՆԿԱՅԻՆ ՈՍԿՈՒ ԵՎ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՎԱԾ ՁՈՒԼԱԿՏՈՐՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՀԱՐԳՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՀԱՐԳԱԴՐՈՇՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆ ԻՐԵՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
19 հունվարի 2007 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 դեկտեմբերի 2006 թվականի N 1903-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ՁՏԱՐԿՄԱՆ, ԲԱՆԿԱՅԻՆ ՈՍԿՈՒ ԵՎ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՎԱԾ ՁՈՒԼԱԿՏՈՐՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՀԱՐԳՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՀԱՐԳԱԴՐՈՇՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆ ԻՐԵՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Թանկարժեք մետաղների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ

հոդվածի 5-րդ և 11-րդ հոդվածի 4-րդ մասերի պահանջները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում թանկարժեք մետաղների զտարկման, բանկային ոսկու և ստանդարտացված ձուլակտորների արտադրության գործունեություն իրականացնող անձանց և թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշմման գործունեություն իրականացնող անձանց կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմին իրենց գործունեության մասին տեղեկությունների (հաշվետվությունների) ներկայացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ա. Մարգարյան**

2007 թ. հունվարի 16
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2006 թվականի
դեկտեմբերի 21-ի N 1903-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԶՏԱՐԿՄԱՆ, ԲԱՆԿԱՅԻՆ ՈՍԿՈՒ ԵՎ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՎԱԾ ՁՈՒԼԱԿՏՈՐՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՀԱՐԳՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՀԱՐԳԱԴՐՈՇՄՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆ ԻՐԵՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

1. Հայաստանի Հանրապետությունում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշմման գործունեություն իրականացնող անձինք Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմին (այսուհետ՝ լիազոր մարմին) են ներկայացնում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման, հարգադրոշմման, հարգի, քանակի և քաշի մասին ամսական հաշվետվություն (N 1 ձև):

2. Հայաստանի Հանրապետությունում թանկարժեք մետաղների զտարկում, բանկային ոսկու և ստանդարտացված ձուլակտորների արտադրություն իրականացնող անձինք լիազոր մարմին են ներկայացնում թանկարժեք մետաղների ստանդարտացված ձուլակտորների և բանկային ոսկու հարգի, քանակի, քաշի և սերիական համարի մասին կիսամյակային աճողական հաշվետվություն (N 2 ձև):

3. Հայաստանի Հանրապետությունում թանկարժեք մետաղների զտարկում, բանկային ոսկու և ստանդարտացված ձուլակտորների արտադրություն իրականացնող անձինք լիազոր մարմին են ներկայացնում թանկարժեք մետաղների զտարկման հումքի տեսակի, հումքի մեջ թանկարժեք մետաղի պարունակության, քաշի և ստացված արդյունքների մասին կիսամյակային աճողական հաշվետվություն (N 3 ձև):

4. Հայաստանի Հանրապետությունում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշմման գործունեություն իրականացնող անձինք լիազոր մարմին են ներկայացնում թանկարժեք մետաղների և թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման, հարգադրոշմման, քանակի և քաշի մասին, ըստ պատվիրատուների, ամսական հաշվետվություն (N 4 ձև):

5. Սույն կարգի 1-4-րդ կետերով սահմանված հաշվետվությունները լիազոր մարմին են ներկայացվում ուղեկցող նամակով՝ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 25-ը:

6. Հաշվետվությունը լիազոր մարմին ներկայացված է համարվում սույն կարգի 4-րդ կետով նախատեսված հաշվետվությունը լիազոր մարմնում ստացված թղթակցության ընդունման և գրանցման համար պատասխանատու ստորաբաժանման կողմից մուտքագրման օրվանից, իսկ այդ հաշվետվությունը լիազոր մարմին փոստով ուղարկվելու դեպքում՝ փոստային համապատասխան ծառայության կողմից մուտքագրման օրը:

7. Սույն կարգի 1-ին կետով նախատեսված հաշվետվության մեջ թվարկված թանկարժեք մետաղներից պատրաստված իրերը բաժանվում են հետևյալ խմբերի՝

ա) անձնական զարդարանքի առարկաներ՝ մատանիներ, ականջօղեր, կրծքազարդեր, վզնոցներ, ապարանջաններ, ուլունքներ, շղթաներ, մեդալիոններ, գնդասեղներ և այլն.

բ) այլ ոսկերչական իրեր՝ հարդարանքի առարկաներ (դիմափոշու ամաններ, հայելիներ, սրվակներ, գլխարկի գնդասեղներ, թևքաճարմանդներ, փողկապի սեղմիչներ և այլն), ծխելու հարմարանքներ (ծխախոտատուփեր, մոխրամաններ, մուշտուկներ, ծխամորճեր և այլն), սեղանի սպասքավորման հարմարանքներ (գդալներ, պատառաքաղներ, դանակներ, աղամաններ, բաժակներ, բաժակակալներ, թխվածքի բահիկներ, շաքարամաններ, պնակներ և այլն), գրասեղանի հարմարանքներ (գրասեղանի սարքեր, թղթի դանակներ, մատիտների բաժակներ, գրիչներ, գրչածայրեր և այլն), ժամացույցներ ու դրանց հարմարանքները (ժամացույցի պատյաններ, ձեռքի ժամացույցի ապարանջաններ, գրպանի ժամացույցի կողքի շղթաներ և այլն), շենքի ներսի զարդարման հարմարանքներ (արձանիկներ, զարդատուփեր, մոմակալներ, ծաղկամաններ և այլն) և հուշանվերներ (շքանշաններ, մեդալներ, հուշանվերներ, կրծքանշաններ, կախազարդեր, խորհրդանշաններ և այլն):

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար **Մ. Թոփուզյան**

Ձև N 1

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն (ամսական)

ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՀԱՐԳՈՐՈՇՄԱՆ, ՀԱՐԳԱԴՐՈՇՄՄԱՆ, ՀԱՐԳԻ, ՔԱՆԱԿԻ ԵՎ ՔԱՇԻ ՄԱՍԻՆ

NN ը/կ	Հարգը	Հարգորոշվել է		Հարգադրոշմվել է		
		թանկարժեք մետաղներից պատրաստ-ված իրեր	թան-կար-ժեք մե-տաղ-ներ	անձնական զարդարանքի առարկաներ	այլ ոսկերչական իրեր	ընդամենը

		քանակը	քաշը	քաշը	քանակը				քաշը	քանակը				քաշը	քանակը				քաշը
					մեխա-նիկա-կան	էլեկ-տրա-կայ-ծային	լազե-րային և այլն	ընդա-մենը (հատ)	ընդա-մենը (գրամ)	մեխա-նիկա-կան	էլեկ-տրա-կայ-ծային	լազե-րային և այլն	ընդա-մենը (հատ)	ընդա-մենը (գրամ)	մեխա-նիկա-կան	էլեկ-տրա-կայ-ծային	լազե-րային և այլն	ընդա-մենը (հատ)	ընդա-մենը (գրամ)
		1. Ոսկյա իրերի համար																	
1.1.	375																		
1.2.	416																		
1.3.	500																		
1.4.	583																		
1.5.	585																		
1.6.	750																		
1.7.	916																		
1.8.	958																		
1.9.	999																		
	Ընդա-մենը																		
		2. Արծաթյա իրերի համար																	
2.1.	800																		
2.2.	830																		
2.3.	875																		
2.4.	925																		
2.5.	960																		
2.6.	999																		
	Ընդա-մենը																		
		3. Պլատինե իրերի համար																	
3.1.	900																		
3.2.	950																		
	Ընդա-մենը																		
		4. Պալադիումե իրերի համար																	
4.1.	500																		
4.2.	850																		
	Ընդա-մենը																		

_____ _____ _____

(կազմակերպության անվանումը) (կազմակերպության ղեկավարի կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Կ.Տ.

(Ձևը խմբ. 29.05.08 N 518-Ն)

Ձև N 2

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն (կիսամյակային)

ԲԱՆԿԱՅԻՆ ՈՍԿՈՒ ԵՎ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՎԱԾ ԶՈՒԼԱԿՏՈՐՆԵՐԻ ՀԱՐԳԻ, ՔԱՆԱԿԻ, ՔԱՇԻ ԵՎ ՍԵՐԻԱԿԱՆ ՀԱՄԱՐԻ ՄԱՍԻՆ

NN				
ը/կ	Հարգը	Քանակը	Քաշը	Սերիական համարը (ստանդարտացված ձուլակտորի համար մեկ կգ և ավելիի դեպքում)
1	2	3	4	5
	Բանկային ոսկի			
1.	995			
2.	999			
	ընդամենը			

Ստանդարտացված ձուլակտոր				
		1. Ոսկի		
1.1.	375			
1.2.	416			
1.3.	500			
1.4.	583			
1.5.	585			
1.6.	750			
1.7.	916			
1.8.	958			
1.9.	999			
	ընդամենը			
		2. Արծաթ		
2.1.	800			
2.2.	830			
2.3.	875			
2.4.	925			
2.5.	960			
2.6.	999			
	ընդամենը			
		3. Պլատին		
3.1.	900			
3.2.	950			
	ընդամենը			
		4. Պալադիում		
4.1.	500			
4.2.	850			
	ընդամենը			

(կազմակերպության անվանումը) (կազմակերպության ղեկավարի անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Կ.Տ.

Հավ N 3

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն (կիսամյակային աճողական)

ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ՁՏԱՐԿՄԱՆ ՀՈՒՄՔԻ ՏԵՍԱԿԻ, ՀՈՒՄՔԻ ՄԵՋ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ, ՔԱՇԻ ԵՎ ՍՏԱՑՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

NN			Հումքի մեջ թանկարժեք մետաղի պարունակությունը				Ստացված արդյունքը							
ը/կ	Հումքի տեսակը	Հումքի քաշը	ոսկի	արծաթ	պլատին	պալադիում	ոսկի		արծաթ		պլատին		պալադիում	
			տոկոսը (%)	տոկոսը (%)	տոկոսը (%)	տոկոսը (%)	քաշը (գրամ)	հարգը	քաշը (գրամ)	հարգը	քաշը (գրամ)	հարգը	քաշը (գրամ)	հարգը

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
	Ընդամենը													

_____ _____ _____

(կազմակերպության անվանումը) (կազմակերպության ղեկավարի անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Կ.Տ.

Հավ N 4

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՀԱՐԳՈՐՈՇՄԱՆ, ՀԱՐԳԱԴՐՈՇՄՄԱՆ, ՔԱՆԱԿԻ ԵՎ ՔԱՇԻ ՄԱՍԻՆ՝ ԸՍՏ ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆԵՐԻ

NN ը/կ	Պատվի-րատուի անվա-նումը	Թան-կարժեք մետաղի տեսակը	Հարգորոշվել է		Հարգադրոշմվել է							
					մեխանիկական		էլեկտրակայծային		լազերային և այլն		ընդամենը	
			քանակը (հարգ)	քաշը (գրամ)	քանակը (հարգ)	քաշը (գրամ)	քանակը (հարգ)	քաշը (գրամ)	քանակը (հարգ)	քաշը (գրամ)	քանակը (հարգ)	քաշը (գրամ)

(կազմակերպության անվանումը) (կազմակերպության ղեկավարի անունը, ազգանունը) (ստորագրությունը)

(Ձևը խմբ. 29.05.08 N 518-Ն)